

**Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի
(Պոլիտեխնիկ) Վանաձորի մասնաճյուղ**

Հաստատված է ՀՊՃՀ Գիտխորհրդի
2012թ. սեպտեմբերի 27 -ի թիվ 09 որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ) ՎԱՆԱՁՈՐԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2012-2016թթ.)**

Ռազմավարական ծրագիրը ստեղծվել է ՀՊՃՀ գիտխորհրդի 01.12.2011թ. թիվ 23 որոշման հանձնարարականի համաձայն, ՀՊՃՀ ռեկտորի թիվ 01-03182 01.03.2012թ. հրամանով հաստատված ՀՊՃՀ կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի մշակման հանձնաժողովի կողմից:

Կազմողներ՝ Ա.Գ.Խառատյան, Վ.Ա.Բալայան, Կ.Ս.Քոչարյան,
Մ.Թ.Նաջարյան, Ն.Ի.Մամուլյան

Խմբագրեց՝ Դ.Հ.Հուսիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Նախաբան | 4 |
| Մասնաճյուղի առաքելությունը | 4 |
| ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի 2007-2011թթ. Ռազմավարական պլանի իրականացման հիմնական արդյունքները և հետագա ռազմավարական թիրախները | 5 |
| Մասնաճյուղի զարգացման ռազմավարության նպատակները, խնդիրները և դրանց իրագործման ուղղությունները | 11 |
| Նպատակ 1 | 11 |
| Նպատակ 2 | 13 |
| Նպատակ 3 | 17 |
| Նպատակ 4. | 19 |
| Նպատակ 5 | 21 |
| Նպատակ 6 | 23 |
| Նպատակ 7 | 25 |
| Նպատակ 8 | 27 |

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղն իր առաջին ռազմավարական պլանը մշակել և ընդունել է 2006թ.-ին՝ 2007-2011թթ. համար, Tempus-Tacis UM-JEP 25058-2004 “Միջավայրով ուղղորդված ռազմավարական պլանավորում ՀՊՃՀ-ում” նախագծի շրջանակներում:

Այս ծրագիրը, կառուցվածքային առումով հիմնականում պահպանելով նախորդի կառուցվածքը, ներառում է նախորդ ռազմավարական պլանի կատարման արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև հիմնվում է ՀՊՃՀ ռեկտորի զարգացման և բարեփոխումների, ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրենի զարգացման և բարեփոխման հայեցակարգերի հիմնադրույթների, ինչպես նաև ՀՊՃՀ 2011-2015թթ. Ռազմավարական պլանի վրա:

Ռազմավարական ծրագիրը կաշխատի, եթե միարժեքորեն ընդունվի այն իրականացնող բոլոր մասնակիցների կողմից, դառնալով յուրատեսակ ճանապարհային քարտեզ, ուղղորդիչ ուժ հետագա գործունեության համար:

Բարի երթ մաղթելով ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրին, համոզված ենք, որ պոլիտեխնիկցիները ապագայում էլ կգործեն ի զարգացումն ճարտարագիտական կրթության, ի բարօրություն մեր ժողովրդի և ի հզորացումն հայոց պետականության:

Մ Ա Ս Ն Ա Ճ Յ ՈՒ Դ Ի Ա Ռ Ա Ք Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Վանաձորի մասնաճյուղը ճարտարագիտական կրթության և գիտության կենտրոնն է Լոռու տարածաշրջանում, որի հիմնական առաքելությունն է՝

- իր կրթական և հետազոտական ծրագրերի միջոցով նպաստել տարածաշրջանի սոցիալ տնտեսական զարգացմանը, արդյունաբերության վերականգնմանը տարածաշրջանային գերակա ուղղություններում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ճյուղերում,
- զարգացնել տարածաշրջանի ճարտարագիտական և հետազոտական ներուժը մարզի արդյունաբերության զարգացման և աշխատաշուկայի կարիքներին համահունչ,
- մատուցել հարատև ուսումնառության (մասնագետների վերապատրաստման, որակավորման բարձրացման), տեղեկատվական, խորհրդատվական և այլ անհրաժեշտ ծառայություններ Վանաձորի և Լոռու մարզի բնակչությանը:

ՀՊՃՀ ՎԱՆԱԾՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2007-2011 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԹԻՐԱԽՆԵՐԸ

Լոռու մարզի տնտեսության իրադրային վերլուծությունը 2007-2011թթ. համար

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի՝ որպես տարածաշրջանային բուհի, համար կարևոր նշանակություն ունի Լոռու մարզի տնտեսության վիճակի վերլուծությունը՝ նախորդ հնգամյակի համար:

Լոռու մարզում զգալիորեն ավելացել է արդյունաբերական արտադրանքի ծավալը: 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Լոռու արդյունաբերության աճը կանգնել էր, սակայն 2010թ.-ին արդյունաբերական արտադրանքի ծավալը տարեկան աճել էր ավելի քան 1/3-ով, իսկ 2011թ.-ին, նախորդ տարվա համեմատ, տարեկան աճը 1/5-ից ավելի էր: Լոռին արդյունաբերական արտադրանքի ծավալով հանրապետության մարզերի թվում չորրորդն է:

2011թ.-ին մարզում արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալի շուրջ մեկ տասներորդը բաժին էր ընկնում հանքագործական արդյունաբերությանը: Վերջինիս ծավալով Լոռին Հայաստանում երկրորդն է՝ Սյունիքից հետո: 2007թ.-ից ի վեր մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքը տարեց-տարի միայն ավելացել է, այդ թվում՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: 2010-2012թթ.՝ երկու տարում, Լոռու մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 40 տոկոսով ավելի էր, քան 2001-2009թթ.՝ ինը տարում միասին:

Լոռու արդյունաբերական արտադրանքի առյուծի բաժինը՝ 80 տոկոսը կազմում է մշակող արդյունաբերությունը: 2010թ. հիմնային մետաղների արտադրության ծավալով Լոռին զիջել է միայն Երևանին: 2010թ.-ին այստեղ է արտադրվել Հայաստանում հիմնային մետաղների արտադրության ծավալի 1/4-ից ավելին: 2010թ.-ին Լոռու մարզում հիմնային մետաղների արտադրության ծավալը երկու անգամ ավելի էր, քան մյուս մարզերում միասին:

2010թ.-ին հանրապետության մարզերում քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության ծավալի շուրջ 30 տոկոսն արտադրվել է Լոռու մարզում:

Մարզը էլեկտրական սարքավորումների արտադրության առաջատարն է ՀՀ մարզերում. 2010թ. հանրապետությունում էլեկտրական սարքավորումների արտադրության համախառն ծավալի ավելի քան 1/5-ն արտադրվել է Լոռիում:

2010թ.-ին, մարզում արտադրվել է ավելի մեծ համախառն ծավալով հագուստ, քան հանրապետության մյուս մարզերում միասին, այն կազմել է հանրապետությունում արտադրված հագուստի արտադրանքի ընդհանուր ծավալի 1/5-ից ավելին:

Մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ընկերությունը, որը 2011թ. ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 72 տոկոսը, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը (շուրջ 11,5 տոկոս), «Ավտոգեն-Մ» ընկերությունը (շուրջ 2 տոկոս), Ձորահէկը (1,6 տոկոս), Վանաձոր-Քիմպրոմ և «ԱՏ Գրեյն» ընկերությունները (յուրաքանչյուրը մեկ տոկոսից ավելին):

Միայն 2011թ. Լոռու արդյունաբերության ոլորտում ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցել է 42 միլիարդ դրամը: 2011թ. լիարժեք վերագործարկվել են Վանաձորի «Բազում-Ֆիրմա» և Սպիտակի «Վանուհի» ընկերությունները, գործարկվել է նոր փոքր ՀԷԿ՝ «Կարբի Ջրիոս»:

2011թ. «Սագամար» ընկերությունը գործարկել է Արմանիսի հարստացուցիչ կոմբինատը՝ ներդնելով ավելի քան 14,6 միլիոն ԱՄՆ դոլար: 2011-13թթ. նախատեսվում է ևս 23 մլն. դոլարի ներդրում՝ ստորգետնյա հանքի կառուցման նպատակով:

2011թ. “Նյու թեքն” և ճապոնական կապիտալով Շանհայում ու Մալազիայում գործունեություն ծավալող “Կոյո” ընկերությունների միջև ստորագրվել է պայմանագիր՝ Սպիտակ քաղաքում վերելակների գործարան հիմնելու մասին:

2011թ.-ին Վանաձորում, բացվել է SS ոլորտում գործող “Ինսթիգեյթ” ընկերության մասնաճյուղը, որի կողմից ՀՊՃՀ ՎՄ-ում կազմակերպվել են հնգամսյա հատուկ դասընթացներ, իսկ դրանց տասը մասնակիցների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

2010թ. Լոռու մարզում իրականացված շինարարական աշխատանքների ծավալն ընթացիկ գներով 2004թ. ծավալի եռապատիկն էր: 2009-2010թթ.՝ երկու տարում, մարզում իրականացված շինարարության ծավալն ընթացիկ գներով գրեթե նույնքան էր, որքան 2000-2004թթ.՝ հինգ տարում կատարված աշխատանքների ծավալը: 2010թ. մարզում շահագործման է հանձնվել նույնքան ընդհանուր մակերեսով բնակելի շենք, որքան 2007թ. հանրապետության բոլոր մարզերում միասին:

2010թ. Հայաստանում կրթության ծառայությունների ծավալով Լոռու մարզը զիջում էր միայն Երևանին ու Շիրակին, կազմելով հանրապետական ցուցանիշի շուրջ մեկ քառորդը:

2010թ. հանրապետության մասշտաբով տեղեկատվության և կապի ծառայությունների ամենամեծ ծավալը Լոռին էր:

2005-2010թթ. մարզում տրանսպորտի ծառայությունների ծավալն ավելացել է 30 տոկոսով:

Լոռու մարզի տնտեսության իրական հատվածն ավելի ու ավելի է հետաքրքրական և գրավիչ դառնում Հայաստանի բանկային հատվածի համար: Մարզի քաղաքներում, գլխավորապես՝ Վանաձորում, բացվում են բանկերի նոր մասնաճյուղեր, բանկերի տրամադրած վարկերի ծավալը տարեց-տարի աճում է: 2011թ. մարզում գործում էին առևտրային բանկերի 30 մասնաճյուղեր: 2011թ. մարզի ութ բանկեր տրամադրել են մեկական միլիարդ դրամից ավելի վարկեր:

Լոռու մարզում 2005թ.-ից ավելացել է ուղևորափոխադրումների ծավալը, որի ծավալը 2010թ.-ին 2004թ.-ի նկատմամբ գերազանցել է ավելի քան 2,8 անգամ: Մարզում գործում են ավելի քան 75 մերմարզային և ավելի քան 30 ներքաղաքային կանոնավոր փոխադրումների երթուղիներ, որոնք սպասարկում են ավելի քան 20 ԱՏՁ:

Մարզի բոլոր քաղաքների միջազգային և միջքաղաքային կապուղիների թվային տրանսպորտային համակարգերը 2007-2011թթ. վերափոխվել են նոր, ժամանակակից և բարձր ունակությամբ հզոր համակարգերով՝ մարզի բնակիչներին ապահովելով արագընթաց կորպորատիվ և ինտերնետ կապով: ADSL կապի բաժանորդների թիվը մարզում անցնում է 3260-ից: 2011թ.-ին Լոռիում գործում էր չորս տասնյակից ավելի բջջային կայան:

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի նախորդ, 2007-2011թթ. Ռազմավարական պլանի իրականացման արդյունքների ամփոփումն, ըստ մասնաճյուղի գործունեության և զարգացման ուղղությունների, հնարավորություն է տալիս արձանագրելու հետևյալը.

Ընդունելություն և ուսանողական համակազմ

ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի ընդունելության ցուցանիշների վերլուծությունն ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի հանգեցնում է տարբեր եզրակացությունների: Տարածաշրջանի դպրոցների շրջանավարտների թվի անընդհատ նվազումն ընդհանուր առմամբ ազդել է դիմորդների թվի, հետևաբար նաև՝ առկա ուսուցմամբ ընդունելության նվազող ցուցանիշների վրա: Նախորդ ռազմավարական պլանով սահմանված ցուցանիշներից գերակատարվել է հեռակա ուսուցման ընդունելությունը՝ 57, պլանային 50-ի դիմաց, իսկ բակալավրիատի առկա ուսուցման համակարգով 2010թ.-ին նախատեսված 150-ի փոխարեն

ընդունվել են 70-ը: Նվազել է նաև նախասահմանված ուսանողական համակազմի թիվը՝ պլանավորված 800-ի փոխարեն՝ 659: Հաջողված պետք է համարել նաև 2008թ.-ից սկսված "Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն" մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը, ինչպես նաև գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներով նախատեսված ընդունելության աջակցման և մարքեթինգի շուրջտարյա գործող մասնաճյուղային կառույցի ստեղծումը և նրա գործունեության զարգացումը, չնայած որ այդ աշխատանքներում մասնաճյուղի ոչ բոլոր ստորաբաժանումներն են ակտիվորեն մասնակցել:

Ընդունելության կատարողական բնութագրերի և ուսանողական համակազմի հանրագումարային թվերի վրա մեծ ազդեցություն է թողել 2011թ. հանրակրթական դպրոցների շրջանավարտ չտալու հանգամանքը, որը բուհի վրա իր բացասական հետագիծն է ունենալու առաջիկա 6 տարիների ընթացքում: Առաջիկա հնգամյակը, վերը թվարկված միջավայրային ծայրահեղ անբարենպաստ ֆոնի վրա, մասնաճյուղից պահանջելու է ուժերի գերազույն լարում և մոտեցումների ու միջոցների բազմազանեցում՝ ՀՊՃՀ ՎՄ զարգացման ռազմավարական կարևորագույն և հիմնախնդիր հանդիսացող, բավարար ուսանողական համակազմ ապահովելու համար:

Ուսուցման որակ և արդյունավետություն, կրթական բարեփոխումներ

Ներդրվել են ուսուցման որակի գնահատման և ապահովման՝ բարձրագույն կրթության որակի արժևորման Եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշների հիման վրա համալսարանական համակարգի ձևավորված հայեցակարգային սկզբունքները: Իրականացվել է մասնաճյուղի գործունեության ինքնավերլուծություն: Ստեղծվել է "Կրթության որակի վերահսկման և կառավարման" բաժին, որի համար մշակվել և կանոնակարգվել են գործունեության դաշտը, հստակեցվել գործառնությունները, պարտականությունները, նպատակներն ու խնդիրները, որոնցից առաջնայիններից է որակի ապահովման ներմասնաճյուղային համակարգի ստեղծումը:

Նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը՝ պարբերաբար կատարելագործվել են ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման մեխանիզմներն ու գործընթացները:

Տարածաշրջանի տնտեսական զարգացման գերակայություններին և փոփոխություններին համահունչ, Մասնաճյուղը ապահովել է իր մասնագիտական պրոֆիլը: Իրականացվել են առկա մասնագիտությունների վերախմբավորումներ՝ խոշորացման և դրանք ավելի ունիվերսալ դարձնելու նպատակով: Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պարտադիր արտաքին փորձաքննության պահանջի իրագործումը մասնակիորեն է ապահովվել, այն հաճախ չի ծառայել

իր նպատակին և ձևական բնույթ է կրել՝ գործատուի կողմից շահագրգիռ մոտեցում չցուցաբերելու պատճառով: Իրավիճակի շտկմանը էապես կնպաստի մայր Համալսարանի կողմից կրթական ծրագրերի ստեղծման և վերանայման նոր, Եվրոպական "թյունինգյան" մեթոդաբանության վրա հիմնված, մեխանիզմների և ընթացակարգերի ներմուծումը:

Ռազմավարական պլանի պահանջներին լիովին համապատասխան, Համալսարանի կազմում հաջողությամբ իրականացվել է Մասնաճյուղի անցումը ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին՝ ապահովելով դրա համատեղելիությունը Եվրոպական ECTS համակարգի հետ. բակալավրական ծրագրում ամբողջական անցումն սկսվել է 2007/08-ում:

Կողմնորոշիչ ցուցանիշներով նախատեսված նպատակների կատարողականը հետևյալն է. ներդրվել են 2 նոր մասնագիտություններ՝ "Մետալուրգիա և նյութագիտություն", "Օգտակար հանածոների հետախուզում և մշակում", գործատուների պատվերով՝ Ալավերդու "Վալեքս-Մայնիգ" ՍՊԸ-ի, "Սագամար" ՍՊԸ-ի և "Թեղուտ" ՓԲԸ: Բակալավրական և մագիստրոսական բոլոր կրթական ծրագրերը (մասնագիտությունները) 2010թ.-ին անցել են պետական լիցենզավորում: Ուսուցման որակի ամենամյա գնահատման և դրա

արդյունքների հրապարակման պրակտիկայի արմատավորման նպատակով 2009թ. հունիսից “Որակի ապահովման ազգային կենտրոն” հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում մասնաճյուղի գործունեության համապատասխան տվյալները մուտքագրվել են ՈԱԱԿ-ի կայքէջի տվյալների բազայում: Բոլոր կրթական ծրագրերի (մասնագիտությունների) համար առկա են որակավորման բնութագրիչներ: 2010թ. “Շինարարություն, շին. իրերի և կառուցվածքների արտադրություն” մասնագիտության շրջանավարտների 33.3%-ը (պլանային 7%-ի փոխարեն) ընդունվել է այդ մասնագիտությամբ մագիստրատուրա: Մեկ հիմնական դասախոսին ընկնող մեթոդական աշխատանքների թիվը 5 տարում կազմում է 1,56 աշխատանք, նախատեսված 2-ի փոխարեն, իսկ կիրառվող էլեկտրոնային դասախոսությունների մասնաբաժինը 27 առարկա է:

Կադրային ներուժ և աշխատանքային միջավայր, նյութատեխնիկական բազա

Ըստ առաջընթացի գնահատման պլանի հիմնական ցուցանիշների, առկա է հետևյալ պատկերը: Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը կազմել է 51,0%՝ (պլանային ցուցանիշը՝ առնվազն 40%), պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 57 (ոչ ավելի քան 50), պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերում 50 տարեկանից ցածր աշխատողների հաշվեկշիռը՝ 16,3% (առնվազն 30%), պրոֆեսորադասախոսական կազմ ուսումնասօժանդակ կազմ հարաբերակցությունը՝ 3:1 (առնվազն 3:1), ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1 (11:1): Առկա են նաև աշխատավարձերի տարբերակված սանդղակներ աշխատողների տարբեր տարակարգերի համար: Յուրաքանչյուր տարի ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնությունը կազմում է միջինը՝ Մասնաճյուղի արտաբյուջեի 1/10 մասը: Սոցիալական ծրագրերին հատկացումների մասնաբաժինը Մասնաճյուղի արտաբյուջեում կազմել է մինչև 10%: Համալսարանական “Պոլիտեխնիկ” թերթում պարբերաբար լուսաբանվել է մասնաճյուղի գործունեությունը: Մասնաճյուղի ուսխորհուրդը հրատարակել է “Երիտասարդ ճարտարագետ” պարբերաթերթը: Բացակայում են՝ պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման ռեյթինգային համակարգը, աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումները:

Հետևողական աշխատանքներ են տարվել Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի բարելավմանը նպատակաուղղված, Ռազմավարական պլանով առաջադրված, խնդիրների իրագործման ուղղությամբ: Սկսվել և հաջողությամբ ավարտվել է մասնաճյուղի ուսումնական երկու մասնաշենքերի վերականգնման աշխատանքները՝ ապահովելով ուսումնական գործընթացի իրականացման և զարգացման անհրաժեշտ պայմաններ. մեկ ուսանողին 7,6 ք.մ.՝ պլանավորված 7,4-ի դիմաց: Երրորդ մասնաշենքը վերանորոգվել է մասնակիորեն: Իրականացվել են մասնաճյուղի լսարանային ֆոնդի փուլային վերանորոգումներ: Ստեղծվել է բացօթյա մարզահրապարակ, մինի ֆուտբոլի, ձեռքի գնդակի, վոլեյբոլի խաղահրապարակներով և մարմնամարզության 4 մարզասարքերով: Հիմնանորոգվել է ճաշարանային համալիրը 140 ք.մ. մակերեսով: Ապահովվել է կառուցողական համագործակցություն մասնաճյուղի վարչակառավարչական կազմի, արհեստակցական միության և ուսանողության ինքնավարության մարմինների միջև:

Ֆինանսական կայունություն, ռեսուրսների կառավարում

Մասնաճյուղի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը 2011թ.-ին, 2007թ.-ի նկատմամբ, կազմել է 30% (պլանային առնվազն 30%): Արտաբյուջետային մուտքերի աճի տոկոսը՝ 73.4%, նախատեսված առնվազն 10%, ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը) և մասնաճյուղի վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը՝ 1/10: Ստեղծվել է բյուջետային ցուցանիշների հաշվեկշռված համակարգ: Բյուջետային մուտքերը կազմել են. 2007թ.-ին՝

46.230,9 հազ. դրամ, 2011թ.-ին՝ 68.798,0 հազ. դրամ: Մեկ ուսանողին ընկնող դրամական մուտքերը 5 տարվա կտրվածքով աճել են 45,81%-ով: 2007թ.-ին Մասնաճյուղի դրամական մնացորդը տարեսկզբին կազմել է 13.562, 2 հազ. դրամ, 2012թ. սկզբին՝ 35.931.75 հազ. դրամ:

Տեղեկատվական ռեսուրսներ և տեխնոլոգիաներ

Առկա էլեկտրոնային ռեսուրսների մի մասը ներկայացված են ՀՊՃՀ կայքի "Էլեկտրոնային ուսուցում" էջում, ինչն ապահովում է դրանց դիմելու և օգտագործելու մատչելիությունն ու արդյունավետությունը: Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործումով դասընթացների հաշվեկշիռը 27 առարկա է: Ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տեխնիկապես ապահովելու համար մասնաճյուղում ձևավորված են 3 էլեկտրոնային ուսուցման դասարաններ, մեկը՝ փոխներգործուն գրատախտակով, 3 համակարգչային լաբորատորիաներ. 2-ը՝ անվճար ինտերնետ ելքով: Ստեղծվել է նաև ժամանակակից կահավորումով "Անգլիախոսների ակումբ", ինտերնետ ելքով: Գերազանցվել է նաև ինտերնետին միացված համակարգիչների հաշվեկշռային ցուցանիշը՝ 31%, նախատեսված առնվազն 15-20%-ի դիմաց: Երկու մասնաշենքում ստեղծված է անլար ինտերնետից օգտվելու անվճար հնարավորություն: Դասընթացներում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառող դասախոսների թվաքանակը ևս ապահովվել է՝ գերազանցելով նախանշված 20%-ի կողմնորոշիչ սահմանը: Մասնաճյուղը դեռևս չունի էլեկտրոնային ընթերցասրահ, իսկ հեռուսուցման լսարանի ստեղծումն ընթացքի մեջ է: Հիմնական դասախոսների 34.5%-ը, նախատեսված 20%-ի դիմաց, տիրապետում և ուսումնական գործընթացն անց է կացնում արդի տեխնոլոգիաների կիրառմամբ: Մասնաճյուղում օգտագործվում են 58 համակարգիչներ, յուրաքանչյուր 9 ուսանողին՝ մեկ համակարգիչ ցուցանիշով (պլանային 9-10 ուսանողին՝ 1 համակարգիչ):

Հետազոտական ներուժ և գիտություն

Ռազմավարական պլանի առաջադրած խնդիրներին համահունչ, մասնաճյուղի հնգամյա գործունեությունն այս ուղղությամբ, հիմնականում, միտված է եղել պահպանելու և զարգացնելու առկա հետազոտական ներուժը, ինչպես նաև նպաստելու հետազոտությունների ծավալի ու դրանցում դասախոսական կազմի և ուսանողների ընդգրկվածության աստիճանի մեծացմանը: Արդյունքում, առկա են հետևյալ իրողությունները՝ հետազոտական նախագծերում գիտամանկավարժական կազմի մասնակցության տոկոսային ցուցանիշը 17,4% է, 2011 թ.-ին գիտահետազոտական նախագծերում ներգրավվել է 1 ասպիրանտ: Մասնաճյուղի գիտական հետազոտությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը հանդիսացել է ՀՀ պետբյուջեն: Չնայած այն հանգամանքին, որ դիտարկվող ժամանակահատվածից 2007-2010թ.թ.-ին տեղի է ունեցել գիտության բյուջետային ֆինանսավորման ծավալների որոշակի աճ՝ 2708,75 հազար դրամ, 2010 թ.-ին, 2448 հազար դրամ 2006 թ.-ին, իսկ 2011թ. ֆինանսավորում չի եղել: Շարունակվում են աշխատանքները երևանյան կրթահամալիրի հետ համատեղ մասնաճյուղում նոր բազային լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ: Մոտավորապես նույն մակարդակին են մնացել մեկ դասախոսին ընկնող տարեկան հրատարակումների քանակը ($\approx 0,5$ հր/դաս), սակայն աճել է դասախոսների պատենտների և գյուտերի թիվը (4-ը 2011թ.-ին, 2006-ին՝ չկան):

Վերն արձանագրված պատկերը, անկախ եղած անբարենպաստ արտաքին միջավայրային գործոնների, լուրջ մտորումների և հետևությունների առիթ է տալիս: Ակնհայտ է, որ նոր հնգամյակում զարգացման ռազմավարական շեշտադրումներն անհրաժեշտ է վերանայել և ուղղել հետազոտությունների ոլորտների ճշգրտմանը, նրանց արդյունավետության բարձրացմանը և առևտրայնացմանը, ինչպես նաև արդյունքների նորաստեղծային մրցունակության ապահովմանը:

Արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում

Ընդլայնվել են գործընկերային կապերը արտասահմանյան բուհերի և գիտական կազմակերպությունների հետ: Ընդլայնվել և ամրապնդվել են Մասնաճյուղի գործընկերային կապերը պատվիրատու կազմակերպությունների հետ. առկա է տարածաշրջանի ձեռնարկությունների հետ կնքված ավելի քան 16 պայմանագիր (ներառյալ ուսանողների արտադրական պրակտիկաների ապահովմանն ուղղվածները): Ի հավելումն հին գործընկերների, նոր համատեղ նախագծեր սկսվել, իրականացվել, և ներկայումս գործում են նոր ուսումնական կենտրոններ այլ գործընկեր կազմակերպությունների հետ (National Instruments, Instigate, Orange):

Մասնաճյուղի արտաքին կապերի ամրապնդման, արտաքին շահառուների հետ կապերի ապահովման ու Մասնաճյուղի դրական իմիջի պահպանման համար ակտիվացվել են համագործակցությունը տեղական ՋԼՄ-ների հետ, օպերատիվ լրատվությունը և սեփական գովազդային նյութերի հրատարակումը: Արդյունքում, ապահովվել է PR արդյունավետության (Մասնաճյուղի վերաբերյալ ՋԼՄ անդրադարձերի և սեփական գովազդային միջոցառումների թվի) շուրջ 2 անգամ աճ (պլանային 1,5-ի դիմաց):

2010թ.-ին մասնաճյուղն ընդգրկվել է Տեմպուսի Եվրոպական կրթական համագործակցության ծրագրերում.

- Development and Integration of University Self-Assesment Systems (DIUSAS) – Համալսարանի ինքնագնահատման համակարգերի զարգացում և ինտեգրում,
- Promoting Internationalization and Comparability of Quality Assurance in Higher Education (PICQA) - Բարձրագույն կրթության որակի ապահովման համադրելիության և միջազգայնացման աջակցություն:

Տեմպուսի եվրոպական համագործակցության ծրագրերի աշխատանքների շրջանակներում մասնաճյուղի 5 աշխատակիցներ գործուղվել են գործընկեր բուհեր, մասնակցելով այնտեղ կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, աշխատաժողովներին և սեմինարներին:

Ամփոփելով ՀՊՃՀ ՎՄ 2007-2011թթ. Ռազմավարական պլանի իրականացման արդյունքները, գալիք հնգամյակի համար որպես Մասնաճյուղի հետագա զարգացման ռազմավարական հիմնական թիրախներ, առաջադրվում են հետևյալները.

- երաշխավորված ընդունելություն և ուսանողական համակազմ,
- ուսուցման աճող որակ և արդյունավետություն,
- մայր բուհի կազմում ինտեգրում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին,
- որակյալ կադրային ներուժ և նյութատեխնիկական բազա,
- սոցիալական ծրագրեր և ինֆրակառուցվածք,
- կայուն ֆինանսներ և արդյունավետ ու թափանցիկ կառավարում,
- նպատակաուղղված գիտություն և նորաստեղծություն,
- տեղեկատվական համալիր ապահովվածություն,
- զարգացող արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում:

Թվարկված թիրախային գերակայությունները հիմք են ծառայել ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի ներքոշարադրյալ նպատակների, խնդիրների և դրանց իրագործման ուղղությունների ձևավորման և առաջադրման համար:

**ՀՊՃՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ն Պ Ա Տ Ա Կ 1

**ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ**

Մասնաճյուղը պետք է ձգտի պահպանելու և զարգացնելու իր ուսանողական համակազմը: Մասնաճյուղը եղել և մնում է մարզի ճարտարագիտական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների վերարտադրության և զարգացման հիմնական աղբյուրը: Ընդունելության պրոֆիլի ընդլայնումը և մուտքի համապատասխանեցումը հանրապետության և մարզի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատուժի շուկայի պահանջմունքներին՝ մասնաճյուղում պետք է կրի շարունակական բնույթ: Համապատասխանաբար, կարևորվում են դիմորդների կայուն հոսքի ապահովումը և ուսումնառության այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը տարբեր կրթական ծրագրերի գծով: Անհրաժեշտ է ավելացնել դիմորդների սեփական հոսքը մինչբուհական նախապատրաստական համակարգի խողովակով, հենվելով հենակետային ավագ դպրոցների և քոլեջների ցանցի վրա:

Խ Ն Դ Ի Ր 1.1 Համապատասխանեցնել առաջարկվող ուսումնական մասնագիտությունների, կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի տեսականին և ընդունելության պլանավորումը /ներքին համամասնությունները/ աշխատաշուկայի պահանջարկին:

ա) ՀՀ մասնագիտությունների անվանացանկի շրջանակներում, ձևավորել Մասնաճյուղի մոտակա տարիների ընդունելության մասնագիտությունների իրատեսական ցանկ՝ հրաժարվելով դիմորդների կողմից տարեցտարի պահանջարկ չվայելող մասնագիտություններից և ներմուծելով պահանջարկված նոր մասնագիտություններ ու մասնագիտացումներ:

բ) Մշակել և սահմանված կարգով ՀՀ մասնագիտությունների անվանացանկում ընդգրկելու համար առաջադրել հեռանկարային նոր ճարտարագիտական մասնագիտություններ՝ տարածաշրջանի տնտեսական զարգացման գերակայություններին, կրթության շուկայի միտումներին և գիտության ու տեխնոլոգիաների արագընթաց փոփոխություններին համահունչ:

գ) Սահմանել օպտիմալ համամասնություններ կրթական ծրագրերի և դրանց բաղկացուցիչ մասնագիտությունների ընդունելության պլանային չափաքանակների միջև՝ հաշվի առնելով կրթության շուկայի միտումները, նպատակ ունենալով պահպանել ընդհանուր համակազմն ու խթանել դրա հետագա աճը:

դ) Ըստ ամենայնի արձագանքել հեռակա ուսուցման ձևով ընդունելության պահանջարկի աճի միտումներին, միաժամանակ խթանելով նաև շարունակական և լրացուցիչ կրթության ձևերով ընդունելության ընձեռած հնարավորությունների առավել նպատակային իրականացում:

ե) Ձեռնարկել քայլեր ՀՀ և արտասահմանյան առաջատար բուհերի հետ ունեցած համագործացության շրջանակներում՝ համատեղ կրթական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ:

գ) Ընդունելության գործընթացի շրջանակներում բուհի դիմորդների համար կազմակերպել «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաների անվճար դասընթացներ:

Խ Ն Դ Ի Ր 1.2 Բարելավել առաջարկվող կրթական ծրագրերի մարքեթինգն ու արտաքին գրավչությունը, ուժեղացնել կապը դպրոցների, քոլեջների և գործադուրների հետ և ընդունելության գովազդը:

ա) Ընդլայնել և ակտիվացնել Համալսարանի և մասնաճյուղի ընդունելության գովազդը տարածաշրջանի դպրոցներում՝ աշխատանքները սկսելով տվյալ ուսումնական տարվա սկզբին, տնօրենի ղեկավարությամբ գործող համապատասխան ստորաբաժանման միջոցով, առավելագույնս ներգրավելով գովազդային գործընթացում ամբիոններն ու ֆակուլտետները, ուսանողական և շրջանավարտների կառույցները, ինչպես նաև մարզի հիմնական գործատուներին: Կատարելագործել առաջարկվող ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգը, ապահովել անհրաժեշտ տեղեկատվության տարբեր ձևերի մատչելիությունը: Ապագա դիմորդների համար կազմակերպել առարկայական սեմինարներ և անվճար նախապատրաստական դասընթացներ, կազմակերպել բաց դռների օրեր:

բ) Հաստատել փոխշահավետ գործակցային կապեր հիմնական դոնոր դպրոցների հետ՝ տեղերում ստեղծելով հենակետային դասարաններ, մատուցելով անվճար խորհրդատվություն դիմորդների համար:

գ) Նպաստել ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցի հետագա զարգացմանը և շրջանավարտների ներհուքին Համալսարան և Մասնաճյուղ:

դ) Զարգացնել փոխշահավետ համագործակցությունը տարածաշրջանային քոլեջների հետ: Ձեռնարկել քայլեր ՀՊՃՀ ՎՄ-ում միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:

Խ Ն Դ Ի Ր 1.3 Աշխատուժի տարածաշրջանային շուկայի պահանջմունքներին համահունչ՝ առավելագույնս զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը՝ դիտարկելով այն որպես Մասնաճյուղի ուսանողական կայուն համակազմի պահպանմանը նպաստող ռեսուրս:

ա) Համակողմանիորեն զարգացնել ուսանողների կարիերայի նախապատրաստման գործընթացը, աշխատատեղերի որոնման աջակցության, մասնագիտական կողմնորոշման ծառայությունները, համագործակցելով Լոռու մարզի զբաղվածության կենտրոնի հետ:

բ) Նպաստել և խրախուսել Մասնաճյուղի նախաձեռնություններն ուղղված առանձին ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ, աշխատակիցների նպատակային վերապատրաստմանը, պայմանագրային կապերի ձևավորմանը:

գ) Ապահովել լրացուցիչ և շարունակական կրթության մատչելիությունը հանրության ամենալայն շերտերի համար՝ նախաձեռնելով և խրախուսելով հեռավար ուսուցման նոր տեխնոլոգիաների յուրացումն ու կիրառությունը ուսումնառության սույն ծրագրերում:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Ընդունելության մասնագիտությունների հեռանկարային ցանկ
- Հիմնական կրթական ծրագրերով ընդունելության ծավալը 2016 թվին 2012թ. նկատմամբ՝ 50% աճ

- Հիմնական կրթական ծրագրերով համակազմը 2016 թվին առնվազն՝ 800, այդ թվում
- - Բակալավրի ծրագրով, առկա ուսուցում՝ 500
- - Հեռակա ուսուցման գծով՝ 300
- ՀՀ և/կամ արտասահմանյան բուհերի հետ իրականացվող համատեղ կրթական ծրագիր՝ 1 մագիստրոսական ծրագիր
- Տարածաշրջանի ավագ դպրոցներում գործող ՀՊՃՀ ՎՄ հենակետային դասարան՝ առնվազն 1
- Ընդունելության ընդհանուր ծավալը 2016 թվին բոլոր կրթական ծրագրերով – առնվազն 200
- Մասնաճյուղի ավագ դպրոցի դասարանների թիվը՝ 9
- Ընդունելության աջակցման և մարքեթինգի շուրջտարյա գործող համալսարանական կառույց:

ՆՊԱՏԱԿ 2

ԱՊԱՀՈՎԵԼ ՈՐԱԿՅԱԼ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

ԽՆԴԻՐ 2.1 Որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգի շրջանակներում ներդնել որակի ներքին գնահատման և բարելավման համակարգ եվրոպական ENQA չափանիշներին համապատասխան:

ա) Ղեկավարվելով ՀՊՃՀ ռազմավարական պլանով, մասնաճյուղում կատարել կառուցվածքային միավորների, կառավարման կառույցների պարտականությունների և գործառույթների հստակ տարանջատում:

բ) Կիրառել ՀՊՃՀ ստեղծված մեխանիզմները և չափանիշները՝ կրթական ծրագրերի բովանդակության, կադրային-ռեսուրսային ապահովվածության և ուսուցման արդյունքների ինքնավերլուծության, ներքին հավաստի գնահատման ու հետագա մոնիթորինգի համար:

գ) Նախապատրաստել և իրականացնել Մասնաճյուղի կողմից կազմված կրթական ծրագրերի և դրանք իրականացնող հիմնական ուսումնական ստորաբաժանումների գործունեության վերլուծություն և որակի գնահատման ներհամալսարանական համակարգից բխող փուլային գործընթաց՝ մշակված համակարգի կիրառմամբ:

դ) Որակի ներքին գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսուցման որակի բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումներ:

ե) Շարունակել կատարելագործել ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համակարգերը և գործընթացները՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը:

զ) Ապահովել որակի գնահատման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների հրապարակայնացումը:

է) Ձգտել համապատասխանեցնելու մասնաճյուղում ուսուցման (դասավանդման և ուսումնառության) որակի միասնական չափանիշները ՀՊՃՀ-ի համապատասխան չափանիշներին:

ԽՆԴԻՐ 2.2 Իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային վերանայման և նոր ծրագրերի ներմուծման գործընթաց ընդհանուր համալսարանական բարեփոխումների պահանջներին և աշխարհաշուկայի պահանջներին համապատասխան

ա) Մասնակցել ՀՊՃՀ-ում շարունակվող կրթական ծրագրերի, մասնագիտությունների միավորման և խոշորացման ընթացող գործընթացին՝ ուղենիշ ունենալով համապատասխանեցումը եվրոպական ծրագրային չափանիշներին և լայն պրոֆիլի մասնագետների պահանջարկը:

բ) Պարբերաբար վերանայել առաջարկվող մասնագիտությունների ցանկը մարզի աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցումով:

գ) Ելնելով որակական բնութագրիչներից՝ իրականացնել անցում ուսումնական պլանների (ծրագրերի) ճկուն մոդուլային կառուցվածքին խիստ միասնականացնելով ընդհանուր կրթական կառուցամասը բակալավրի կրթական ծրագրում՝ դյուրացնելով ուսանողների միջմասնագիտական տեղափոխումները երկամյա ուսուցման արդյունքների հիման վրա:

դ) Շարունակել կրթական ծրագրերի հումանիտար-տնտեսագիտական և բնապահպանական բաղադրիչների արդիականացման գործընթացը՝ նպատակաուղղելով դրանք ուսանողների հումանիտար-իրավական կուլտուրայի, ձեռներեցության և կառավարման ծիրքերի զարգացմանը:

ե) Էապես բարելավել շրջանավարտների գործնական պատրաստականության բաղադրիչը, բազմազանեցնել և հնարավորինս երկարաժամկետ դարձնել արտադրական պրակտիկան, ընդլայնել բուհ-գործատու կապերը, զարգացնել շահառու կազմակերպություններում մասնաճյուղերի ստեղծման հաջողված փորձը, ընդլայնել պատվիրատու կազմակերպություններում ավարտական կուրսերի ուսանողների ուսուցմանը համատեղված արտադրական փորձառության ձեռք բերման հնարավորությունները:

զ) Ծրագրային վերափոխման և փորձաքննության գործընթացներում առավելագույնս ներգրավել մասնագիտությունների հիմնական պատվիրատու (գործատու) կազմակերպություններին, պետական ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովներում ընդգրկել գործատու ձեռնարկությունների առաջատար մասնագետներին՝ շրջանավարտների կարիերայի լավագույն պլանավորման և հետագա աշխատանքի տեղավորման նկատառումներից ելնելով:

է) Իրականացնել կրթական ծրագրերից և ՀՊՃՀ ՎՄ շրջանավարտներից գործատուների բավարարվածության վերաբերյալ պարբերական ուսումնասիրություններ՝ մնայուն հետադարձ կապի կատարելագործման նպատակով:

Խ Ն Դ Ի Ր 2.3 Կատարելագործել Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգը՝

ընդլայնելով վերջինիս ընձեռած հնարավորությունների օգտագործման

շրջանակը և բարձրացնել դրա կիրառման արդյունավետությունը:

ա) Իրականացնել պլանավորված անցում Մասնաճյուղի մասնագիտությունների կրեդիտային հենքով ձևավորված ճկուն ուսումնական ծրագրերի՝ կրթական վերջնարդյունքների արժևորմամբ պայմանավորված մեթոդաբանության պահանջներին համահունչ:

բ) Ծրագրային վերակառուցման ընթացքում ձգտել հասնել ուսանողների լսարանային (կոնտակտային) և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների միջև ռացիոնալ հարաբերակցությունների՝ բարձրացնելով ինքնուրույն աշխատանքի դերը և ուսումնառության արդյունավետությունը:

գ) Զարգացնել կրեդիտային համակարգի կիրառման արդյունավետության բարձրացմանը ուղղված առկա մեթոդական, չափորոշիչ և տեղեկատվական նյութերի փաթեթները, ապահովելով ուսանողների, դասախոսների և ուսումնական վարչակազմի իրազեկության մակարդակի բարձրացումը:

դ) Ներդնել ուսանողների և ունկընդիրների կողմից դասընթացների ընտրության ու գրանցման համալսարանական կարգը: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և համապատասխան մեխանիզմներ՝ ուսանողների ուսումնառությունը անհատական ծրագրերով կազմակերպելու համար:

ե) Նպաստել ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների ակտիվ մասնակցությանն իրենց անհատական ուսումնառության գործընթացի պլանավորմանը, բարձրացնել ուսանողական խորհուրդների, ուսումնական խորհրդատուների և գիտական ղեկավարների համակարգող դերն ու պատասխանատվությունն այս ուղղությամբ:

զ) Ստեղծել դասընթացներին ուսանողների գրանցման և ուսումնական առաջադիմության տվյալների կառավարման էլեկտրոնային համակարգ, ապահովելով առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրում և մշակում, ակադեմիական տեղեկագրի ու դիպլոմի հավելվածի պատրաստում՝ միասնական հնարավորություններով:

է) Նպաստել եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ուսանողների և շրջանավարտների շարժունությանը՝ լիովին համապատասխանեցնելով դասընթացների կառուցվածքը և ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները ECTS-ի պահանջներին:

Խ Ն Դ Ի Ր 2.4 Բարձրացնել ուսուցման և դասավանդման արդյունավետությունը՝ նոր տեխնոլոգիաների և ժամանակակից ուսանողակենտրոն մանկավարժական մեթոդների կիրառման միջոցով՝ ուսումնառության որակի և արդյունավետության շարունակական բարձրացման համար:

ա) Ներդնել գիտելիքների գնահատման կատարելագործված համակարգերը՝ ելնելով ուսումնառության որակի և ուսանողների շահագրգռվածությունը խթանելու տեսակետից:

բ) Գնահատել և բարձրացնել ուսանողների բավարարվածությունը ուսուցումից: Մշակել ուսուցման տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատման չափանիշներ և իրականացնել ամենամյա սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ ուսանողական խորհուրդների ակտիվ մասնակցությամբ:

գ) Զարգացնել որակյալ ուսումնառությանը նպաստող օժանդակ ուսանողական ծառայություններ, բարելավել ուսանողների և դասախոսների համագործակցությունը և կոնտակտների մատչելիությունը ուսումնական գործընթացում:

դ) Բարելավել շրջանավարտների գործնական պատրաստականությունը, կատարելագործել և բազմազանեցնել արտադրական պրակտիկան, ընդլայնել պատվիրատու կազմակերպություններում ավարտական կուրսերի ուսանողների՝ ուսուցմանը համատեղված արտադրական փորձառության հնարավորությունները:

ե) Բարձրացնել լեզվական և համակարգչային ուսուցման դասավանդման արդյունավետությունը և որակը կրթական բոլոր ծրագրերում, ընդլայնել Wi-Fi կապի հնարավորությունները, ստեղծել ներքին ցանց, ակտիվացնել “անգլիախոսների ակումբի” աշխատանքը՝ ներգրավելով նաև օտարերկրյա մասնագետներին:

զ) Ապահովել ուսումնական ինֆրակառուցվածքի հետագա բարելավումն ու արդիականացումը, որակյալ դասավանդման մեթոդական, տեխնոլոգիական ռեսուրսների, այդ թվում՝ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի զարգացումը, շարունակել ուսումնական ինֆրակառուցվածքի հետագա բարելավման ու արդիականացման գործընթացները, անհրաժեշտ մակարդակով դասավանդման մեթոդական,

տեխնոլոգիական ռեսուրսների, ներառյալ, տեխնոլոգիական կարողություններով լսարանների ցանցի զարգացումը:

ԽՆԴԻՐ 2.5 Նախապատրաստել Մասնաճյուղը կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համալսարանական գործընթացներին:

ա) Լրամշակել Մասնաճյուղի գործունեության կրթական ոլորտների ինքնագնահատման առկա չափանիշները՝ հիմք ընդունելով եվրոպական հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափանիշները:

բ) Իրականացնել Մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների գործունեության՝ նախկինում իրականացված ինքնավերլուծության արդյունքում մշակված միջոցառումների պլանների և կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականների համադրական վերլուծություն և գնահատել արդյունքները ՄԿՈԱԱԿի սահմանած չափանիշների տեսանկյունից:

գ) Ելնելով Մասնաճյուղի գործունեության ինքնագնահատման և կրթական ծրագրերի վերլուծության և որակի գնահատման գործընթացների արդյունքներից, նախապատրաստել ՄԿՈԱԱԿ-ի կողմից Մասնաճյուղի կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթաց:

դ) Համալսարանի հետ համաձայնեցված ստեղծել կրթական ծրագրերի հետագա բարեփոխման և որակի շարունակական բարձրացման պլան-ժամանակացույց, հիմնվելով արտաքին գնահատման արդյունքների վրա:

ե) Ապահովել ուսուցման որակի գնահատման և կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը Մասնաճյուղի ներքին և արտաքին շահառուների համար, ակտիվորեն ներգրավելով վերջիններիս ակտիվ մասնակցությունը:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Առաջարկվող մասնագիտությունների վերանայված ցանկ նոր մասնագիտությունների ներդրումով
- ՀՊՃՀ ՎՄ բոլոր կրթական ծրագրերի (մասնագիտությունների) պետական հավատարմագրում՝ 2015թ.
- ՀՊՃՀ ՎՄ ուսումնական ստորաբաժանումների գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն, ըստ ՄԿՈԱԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների՝ 2012–2013 թ.թ.:
- ՀՊՃՀ ՎՄ որակի գնահատման և ապահովման գործող համակարգ՝ 2009թ.-ից ամենամյա կատարելագործումով:
- Մեկ հիմնական դասախոսին ընկնող մեթոդական աշխատանքների և էլեկտրոնային դասախոսությունների թիվը 5 տարում՝ 2:
- Վերանայված և մեթոդական ու կազմակերպական առումներով կատարելագործված կրեդիտային համակարգ՝ ներդրման ավարտը՝ 2012/13 ուս. տարի:
- ՀՊՃՀ ՎՄ դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ՝ սկսած 2012/13 ուս. տարվանից:

ՆՊԱՏԱԿ 3

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ԽՆԴԻՐ 3.1 Շարունակել բարելավել և համալրել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի բարեփոխումներին և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ:

ա) Կատարել պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում՝ կրթական ծրագրերի որակի ապահովման և զարգացման պլաններին համապատասխանության տեսակետից:

բ) Ստեղծել և իրականացնել դասախոսական կազմի համալրման և զարգացման հեռանկարային ծրագիր և կողմնորոշիչ ժամանակացույց ըստ ուսումնական ստորաբաժանումների և մասնագիտական ուղղությունների՝ ապահովելով դասախոսների որակական կազմի բարելավման և միջին տարիքի նվազման կայուն միտումներ:

գ) Պլանավորել մասնաճյուղի երիտասարդ դասախոսների ասպիրանտուրայի ընդունելությունը դասախոսական կազմի համալրման առաջնային կարիքների ապահովման նպատակով:

դ) Որպես մասնաճյուղի բյուջետային առաջնություն՝ ձգտել ապահովելու դասախոսական կազմի բոլոր տարակարգերի համար ՀՀ բուհական համակարգի միջինից ոչ ցածր աշխատավարձի կայուն մակարդակներ և ստեղծելու արտոնյալ աշխատավարձային և խրախուսման պայմաններ երիտասարդ դասախոսների հավաքագրման համար:

ե) Խթանել դասավանդման արդյունավետության բարձրացմանը Մասնաճյուղում, հիմնել պարգևներ լավագույն մանկավարժական մեթոդական փորձի ճանաչման և խրախուսման համար:

զ) Ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների գործուն համակարգ և գնահատման ընթացակարգ: Գնահատման արդյունքները հիմք ընդունել միջտարակարգային առաջընթացի և աշխատավարձի բարձրացման համար:

է) Ապահովել հիմնական դասախոսական կազմի անխտիր մասնակցությունը դասախոսների կատարելագործման առկա համալսարանական ծրագրերին:

ը) Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը և գիտական ու մանկավարժական շարժունությունը:

ԽՆԴԻՐ 3.2 Բարելավել մասնաճյուղի հաստիքակազմի պլանավորումը և բարձրացնել հաստիքների օգտագործման արդյունավետությունը:

ա) Բարելավել հաստիքների պլանավորումը և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը: Շարունակել ուսանողների, դասախոսների և ուսումնասօժանդակ կազմի թվաքանակների միջև քանակական հարաբերակցությունների լավարկման գործընթացը՝ նպատակն ունենալով ապահովել հստակ հիմնավորված, որակին չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն:

բ) Իրականացնել վարչակազմի փոփոխյին նորացման և երիտասարդացման քաղաքականություն, ստեղծել կայուն ռեզերվ և մրցակցային միջավայր՝ կառավարման կառույցների և ստորաբաժանումների ղեկավար կազմի որակյալ համալրման համար:

գ) Ստեղծել դասախոսների և այլ աշխատողների աշխատավարձերի՝ ըստ գործունեության արդյունքների տարբերակման մեխանիզմ՝ աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով:

դ) Արտաքին հնարավորությունների օգտագործմամբ կազմակերպել վարչակազմի կատարելագործման գործընթաց՝ կառավարման նոր մեթոդների, բուհական կրթության բարեփոխումների, տեղեկատվության կառավարման համակարգերի յուրացման և ներդրման ուղղությամբ:

ԽՆԴԻՐ 3.3 Շարունակել կադրելագործել Մասնաճյուղի կառավարման համակարգը և բարձրացնել դրա արդյունավետությունն ու որակը:

ա) Ներդնել Մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ և այն հիմք ընդունել՝ Մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար:

բ) Բարելավել կառավարման համակարգի տեղեկատվական ապահովումը, ապահովել Մասնաճյուղի գործունեության տաբեր ձևերի տեղեկատվական բազաների փոխազդեցությունը: Ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, ապահովելով արդյունավետ և թափանցիկ կառավարում Մասնաճյուղի վարչական և կառավարչական օղակների միջև:

գ) Ապահովել տեխնոլոգիապես հագեցած, ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր:

ԽՆԴԻՐ 3.4 Ապահովել ուսանողական ինքնավարության ընդլայնումն ու խորացումը Մասնաճյուղում:

ա) Զարգացնել ուսանողական ինքնավարությունը Մասնաճյուղում, ընդլայնելով և խորացնելով ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում: Աջակցել Մասնաճյուղի ուսանողական խորհրդի արտաքին կապերի զարգացմանը:

բ) Նպաստել ուսանողական ինքնավարության մարմինների և Համալսարանի վարչակառավարչական կազմի ու արհեստակցական միության միջև կառուցողական համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը:

ԽՆԴԻՐ 3.5 Ստեղծել նպաստավոր պայմաններ և մթնոլորտ Մասնաճյուղում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար, բարձրացնել աշխատակիցների և ուսանողների “հակակոռուպցիոն գրագիտության” մակարդակը:

ա) Մշակել և իրականացնել Մասնաճյուղի հակակոռուպցիոն քաղաքականությունն ապահովող միջոցառումների պլան-ծրագիր՝ պարտադիր տարեկան վերլուծական հաշվետվություններով և արդյունքների լայն հրապարակայնացմամբ:

բ) Նպաստել Մասնաճյուղում ստեղծված կոռուպցիոն երևույթների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու նրա թափանցիկության ապահովմանը:

գ) Համալսարանի աշխատողների և ուսանողների համար ստեղծել կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հավաստի տեղեկատվությունը տեղ հասցնելու հնարավորություններ և մատչելի ու ժամանակակից ձևեր (վստահության հեռախոսահամար և արկղ, տնօրենի էլեկտրոնային հասցե և այլն):

դ) Նպաստել ուսանողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի դաստիարակմանը:

ե) Ուսումնական գործընթացի կազմակերպական բարեփոխումներում մշտապես ձգտել նվազեցնել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և ապահովել դրանց վերահսկելիությունը, բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:

գ) Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման մրցույթների անցկացման ժամանակ կարևորել դասախոսների անձնային և բարոյահոգեբանական հատկանիշները՝ հաշվի առնելով ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի տոկոսը՝ առնվազն 50%:
- պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում, 2016թ.-ին՝ 2012-ի համեմատ՝ առնվազն 10%
- պրոֆեսորադասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակներ
- ուսման վարձի զեղչերին հատկացումների տոկոսը Մասնաճյուղի արտաբյուջեում՝ 10%
- ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1
- ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1
- Մասնաճյուղի ռազմավարական պլանի առկայություն
- տվյալների տեղեկատվական բազաների առկայություն Մասնաճյուղի գործունեության հիմնական բնագավառների համար
- տարեկան հաշվետվության նոր ձևաթերթ՝ Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների հիման վրա
- հստակ գործող հակակոռուպցիոն քաղաքականություն՝ իրականացմանը նպաստող պայմանների, մեխանիզմների և գործընթացների համակարգով
- Մասնաճյուղում կոռուպցիայի դեպքերի կամ դրանց վերաբերյալ հնչած հիմնավոր բողոքերի բացակայություն:

ՆՊԱՏԱԿ 4

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ՝ ՍՏԵՂԾԵԼՈՎ ՊԱՏՇԱՃ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԿՐԹԱԿԱՆ, ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԶԱՐԳԱՑՆԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Խ Ն Դ Ի Ր 4.1 Շարունակել մասնաճյուղի ուսումնական մասնաշենքերի վերականգնման ու վերակառուցման սկսված գործընթացը, ապահովել ուսումնական գործընթացի նորմափիվային պահանջները :

ա) Մշակել և իրականացնել վերականգնված ուսումնական համալիրի արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան, ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքերի հարցը:

բ) Մոբիլիզացնել արտաքին հնարավորությունները Մասնաճյուղի մարզական բացօթյա բազան, առնվազն՝ մեկ փակ դահլիճով համալրելու համար:

գ) Շարունակել “Ե” և “Ե-1” մասնաշենքերի հիմնանորոգման անավարտ մասերի աշխատանքները:

դ) Հնարավորինս նպաստել “Ա” և “Բ” մասնաշենքերում տեխնոպարկի ստեղծման գործընթացին:

ե) Գտնել միջոցներ վերացնելու հիմնանորոգված մասնաշենքերի տանիքների ջրահեռացման համակարգում ի հայտ եկած թերությունները:

զ) Բարելավել Մասնաճյուղի բոլոր մասնաշենքերում էլեկտրաէներգիայի, ջրի և ջերմամատակարարումները, ամենուր ապահովելով կենսագործունեության անվտանգության և բնապահպանական չափորոշիչային պահանջների իրականացում:

է) Դուրս գրել կամ օտարել շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցները, փնտրել ուղիներ նոր տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար:

ը) Շարունակել Մասնաճյուղի տարածքի կանաչապատման և բարեկարգման սկսված գործընթացը:

Խ Ն Դ Ի Ր 4.2 Կրթական և հեղափոխական ծրագրերի զարգացման կարիքներին և որակի պահանջներին համահունչ շարունակել մասնաճյուղի ուսումնալսաբարապետական բազայի զարգացումն և արդիականացումը:

ա) Գնահատել Մասնաճյուղի ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ որակի ապահովման չափանիշների և մշակել ուսումնագիտական լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան:

բ) Ապահովել լաբորատոր բազայի զարգացման և արդիականացման պլանների իրականացումն ըստ տարիների՝ տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

գ) Զարգացնել և ընդլայնել գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը, շարունակելով Մասնաճյուղում և ձեռնարկություններում համատեղ ուսումնագիտական լաբորատոր բազաների ստեղծումը:

դ) Նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու և նվիրատու անհատների ու կազմակերպությունների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին:

Խ Ն Դ Ի Ր 4.3 Զարգացնել մասնաճյուղի հիմնական սոցիալական ծրագրերը, բարելավել սոցիալական ինֆրակառուցվածքը:

ա) Հիմնանորոգված ուսանողական ճաշարանին հատկացված տարածքում կազմակերպել և ծավալել գործունեություն, ապահովելով սանիտարահիգիենիկ պայմաններ, անհրաժեշտ տեսականի և մատչելի սնունդ:

բ) Զարգացնել համագործակցությունը ՀՊՃՀ ղեկավարության հետ և ապահովել Մասնաճյուղի ուսանողության և աշխատակիցների հանգիստը գործող մարզաառողջարարական ճամբարներում և հանգստի գոտիներում:

գ) Ստեղծել նոր մարզական և մշակութային ակումբներ, նպաստել նրանց ծրագրերի համակողմանի զարգացմանը, խթանել ուսանողների և աշխատողների ակտիվ մասնակցությունը Մասնաճյուղի մշակութային և մարզական կյանքին:

դ) Վերականգնված մասնաշենքերի արդյունավետ օգտագործման հեռանկարային պլանի սահմաններում նախատեսել սանիտարահիգիենիկ պայմաններով և անհրաժեշտ գույքով համալրված 1-2 հյուրասենյակի ստեղծումը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Նյութատեխնիկական բազայի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին
- Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման պլանների առկայություն և կատարողական
- մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) մակերեսը մասնաճյուղում՝ ոչ պակաս, քան պետական նորմատիվով սահմանված 8 ք.մ.
- Մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման ծախսերի հաշվեկշիռը բյուջեում՝ 6%
- ուսումնական և ոչ ուսումնական նպատակներով օգտագործվող տարածքների հարաբերակցությունը մասնաճյուղում՝ 8:1
- մասնաշենքերի, այդ թվում՝ լսարանային ֆոնդի վերակառուցման ծախսերի հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում՝ 6%
- ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացման տարեկան հատկացումների հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում՝ 5%
- սոցիալական ծրագրերին հատկացումների տոկոսը Մասնաճյուղի արտաբյուջեում՝ 7%
- գրադարանային նոր ռեսուրսների ձեռքբերման տարեկան ծախսերի հաշվեկշիռը Մասնաճյուղի բյուջեում՝ 1%
- մարզական համալիրի զարգացման հնգամյա ծրագիր և կատարողական, սննդի օբյեկտի ստեղծում
- հյուրասենյակի ստեղծում՝ 1-2:

ՆՊԱՏԱԿ 5

ՊԱՀՊԱՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՀՈՎԵԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ԶԳՏԵԼՈՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ

ԽՆԴԻՐ 5.1 Նպատակաուղղել մասնաճյուղի ֆինանսական պլանավորումը առաջադրված ռազմավարական նպատակների ու խնդիրների իրագործմանը

ա) Ներդնել ռազմավարական պլանավորումը մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառներում, իրականացնել ուսանողական համակազմի, կադրային և տեղեկատվական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի, ֆինանսական ռեսուրսների և աշխատանքի վարձատրության 2012-2016թթ. պլանավորում:

բ) Մշակել բյուջետավորման համակարգ, որն ապահովի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցումը՝ առաջադրված նպատակներին հասնելու համար:

գ) Ձևավորել մասնաճյուղի ռազմավարական զարգացման բյուջե:

ԽՆԴԻՐ 5.2 Բազմազանեցնել մասնաճյուղի ֆինանսական ներհուքերի աղբյուրները՝ ապահովելով դրանց մեծացումը մասնաճյուղի զարգացման կարիքներին համապատասխան:

ա) Ձգտել պետությունում ֆինանսական ծավալների կայուն աճի՝ մասնագիտությունների ցանկի հետագա լավարկման, պետական գիտակրթական ծրագրերին մասնաճյուղի մասնակցության ընդլայնման միջոցով:

բ) Կտրուկ ավելացնել մասնաճյուղի ծրագրերի և ծառայությունների մարքեթինգի և առևտրայնացման գործընթացների իրականացումը գործունեության բոլոր բնագավառներում:

գ) Բազմազանեցնել և ընդլայնել արտաբյուջետային միջոցների աղբյուրները:

դ) Մասնաճյուղի առևտրային ծրագրերում հնարավորինս ներգրավել ուսանողներին, այդպիսով խթանելով դիմորդների հոսքերի ընդլայնմանը:

ԽՆԴԻՐ 5.3 Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետությունը, ձգտելով աշխատավարձի և զարգացման ծախսերի համապատասխանեցմանը համալսարանական միջին ցուցանիշներին:

ա) Կատարելագործել ֆինանսական կառավարումը Մասնաճյուղում՝ ֆինանսական գործունեության նորմատիվային բազայի հետագա զարգացման, կառավարման տեղեկատվական համակարգերի օգտագործման, լայնածավալ ներդրման և կադրային կազմի վերապատրաստման ու համալրման միջոցով:

բ) Շարունակել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգի և նյութական արժեքների հաշվառման գործընթացի կատարելագործումը:

գ) Շարունակել ռեսուրսախնայողության քաղաքականությունը:

դ) Նվազեցնել մասնաճյուղի վարչական ծառայությունների ծախսերը՝ դրանց գործունեության արդյունավետության բարձրացման միջոցով:

ե) Մշակել և ներդնել ըստ վերջնարդյունքի աշխատանքի գնահատման մեխանիզմներ, խիստ կարևորելով նաև կատարված աշխատանքի որակական ցուցանիշները:

զ) Մասնաճյուղում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացման նպատակով մշակել և ներդնել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը նպատակուղղված գործուն մեխանիզմներ:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- 2016 թվականին՝
 - արտաբյուջետային մուտքերի աճի տոկոսը 2012թ. նկատմամբ՝ առնվազն 20%
 - ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 5%
 - մասնաճյուղի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը՝ առնվազն 35%
 - ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի գեղչերը) և մասնաճյուղի վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը՝ 1/10
- բյուջետային ցուցանիշների հաշվեկշռված համակարգ
- ռազմավարական զարգացման բյուջեի առկայություն:

ՆՊԱՏԱԿ 6

ԶԱՐԳԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

ԽՆԴԻՐ 6.1 Ապահովել տեխնոլոգիական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը և որակական նոր մակարդակի ձեռք բերումը Մասնաճյուղի կրթական, գիտական բոլոր գործընթացներում:

ա) Ապահովել տեխնոլոգիական կարողությամբ լսարանների առկա ռեսուրսների շարունակական ընդլայնման և տեխնիկական վերազինման գործընթաց, աջակցել մայր-կրթահամալիրի հետ հեռաուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ ինֆրակառուցվածքի ձևավորման գործընթացին:

բ) Խթանել և խրախուսել մասնաճյուղում էլեկտրոնային (On-line) եղանակով ուսուցման դասընթացների մշակումն ու ներդրումը, ինչպես նաև վիրտուալ լաբորատորիաների ստեղծմանը: Մասնաճյուղում ընդլայնել անլար ինտերնետային կապի ծածկույթը: Ձևավորել անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսներ՝ էլեկտրոնային եղանակով (On-Line) ուսուցման դասընթացների մշակման և ներդրման համար:

գ) Դասընթացների և ուսումնական նյութերի էլեկտրոնային տարբերակների մշակման և իրականացման նպատակով կազմակերպել դասախոսների պարբերական վարժանքներ, օգտագործելով ինչպես Մասնաճյուղի ներքին, այնպես էլ գործընկերների ռեսուրսները:

դ) Ստեղծել և ներդնել ուսուցման Web հենքով ունիվերսալ էլեկտրոնային համակարգ, ապահովելով աստիճանական անցում դասընթացների և ուսումնական նյութերի մատուցմանը այդ համակարգի միջոցով:

ե) Առաջնահերթ խնդիր դնել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի վերապատրաստումը՝ Մասնաճյուղի միասնական տեղեկատվական համակարգում աշխատանքի համար:

ԽՆԴԻՐ 6.2 Զարգացնել մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների համալրման գործընթացը, ապահովել դրանց մարչելիության ու արդյունավետ օգտագործումը՝ կրթական և հետազոտական կարիքների զարգացմանը համահունչ:

ա) Իրականացնել Մասնաճյուղի էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների (տպագիր և էլեկտրոնային) վիճակի ուսումնասիրություն և գույքագրում, ստեղծելով առկա ռեսուրսների էլեկտրոնային քարտարան:

բ) Ստեղծել Մասնաճյուղի գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահ:

- գ) Աջակցել Համալսարանի էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների համապարփակ տվյալների բազայի ստեղծմանը:
- դ) Հատկացնել էլեկտրոնային հարատև հասցեներ Մասնաճյուղի բոլոր ուսանողներին և դասախոսներին:
- ե) Պարբերաբար արդիականացնել Համալսարանի ինտերնետային կայքում Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսները:
- զ) Հասնել ուսումնական մասնագիտությունների դասընթացների առնվազն 45%-ի ապահովվածությանը էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով (դասախոսությունների տեքստեր, առարկայական ծրագրեր, թեստավորման փաթեթներ, սլայդներ, հղումներ և այլն):

Խ Ն Դ Ի Բ 6.3 Ձևավորել մասնաճյուղի միասնական տեղեկատվական համակարգ, ապահովելով աճող տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարում:

- ա) Ձևավորել Մասնաճյուղի կառավարման միասնական տեղեկատվական բազա՝ առանձին բնագավառների տվյալների բազաների ստեղծման և ինտեգրման հիման վրա:
- բ) Ջարգացնել և արդիականացնել մասնաճյուղի համակարգչային ներքին ցանցը՝ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման համար անհրաժեշտ հուսալիության, մասշտաբայնության, պաշտպանվածության և արտադրողականության նոր պահանջներին համապատասխան:
- գ) Ընդլայնել Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը:

Խ Ն Դ Ի Բ 6.4 Դարձնել մասնաճյուղը տեղեկատվական ծառայությունների տարածաշրջանային կենտրոն:

- ա) Մասնաճյուղում ստեղծել նպաստավոր պայմաններ և տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ՝ տեղեկատվական ծառայությունների տարածաշրջանային կենտրոն հիմնադրելու նպատակով:
- բ) Ընդլայնել և խորացնել համագործակցությունը պետական, հանրային և ոչ կառավարական կառույցների ու հիմնադրամների հետ՝ բնակչությանը, մասնավորապես դպրոցական համայնքին մատուցվող ծառայությունների ընդլայնման և բազմազանեցման նպատակով:
- գ) Աջակցել “Instigate Design”, “Orange“, “National Instruments” և այլ գործընկեր ձեռնարկությունների նախաձեռնություններով մշակվող համատեղ նախագծերի իրականացմանը՝ ուղղված Մասնաճյուղում տարածաշրջանի համար բարձր տեխնոլոգիաների ոլորտի (ներառյալ՝ SS) բարձրորակ մասնագետների պատրաստման խթանմանը:
- դ) Աջակցել ՀՊՃՀ-ում առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների ազգային ռեսուրսների կենտրոնի ստեղծմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Տեղեկատվական ռեսուրսների զարգացման հնգամյա պլան
- գործող էլեկտրոնային ընթերցասարահ
- առնվազն 8-10 տեխնոլոգիական կարողությամբ լսարաններ
- հեռաուսուցման գործող լսարան
- էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ առնվազն 50%
- տեխնոլոգիաների կիրառում՝ հիմնական դասախոսների առնվազն 50%-ի կողմից
- յուրաքանչյուր ուսանողին բաժին ընկնող և ուսումնական նպատակներով օգտագործվող առնվազն 0,15-0,2 համակարգիչ
- Մասնաճյուղի բոլոր մասնաշենքերում գործող անլար ինտերնետային կապ
- Կենտրոնական կրթահամալիրի հետ գործող հեռաուսուցման ինֆրակառույց:

ՆՊԱՏԱԿ 7

ՄԵԾԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԽՆԴԻՐ 7.1 *Զարգացնել Մասնաճյուղի հետազոտական համագործակցությունը մարզի արդյունաբերական ձեռնարկությունների հետ՝ ուղղելով նախագծերը նոր և մրցունակ արտադրատեսակների ստեղծմանը:*

ա) Ատենախոսական հետազոտությունները համարել Մասնաճյուղի հետազոտական աշխատանքների կարևորագույն բաղադրամաս: Ապահովել ատենախոսությունների թեմատիկայի կապը Համալսարանում և Մասնաճյուղում իրականացվող հետազոտական նախագծերի և մարզի արդյունաբերական ձեռնարկությունների առջև կանգնած հիմնախնդիրների, մասնավորապես՝ նոր նախագծերի և մրցունակ արտադրատեսակների ստեղծման հետ: Ընդլայնել դասախոսների մասնակցությունը հետազոտական նախագծերում:

բ) Խթանել մագիստրանտների ակադեմիական շարժունությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում, ստեղծելով համատեղ մագիստրոսական ծրագրեր:

գ) Շարունակել և զարգացնել պայմանագրային հարաբերությունները հայրենական, մարզային պատվիրատու կազմակերպությունների հետ՝ մասնակից դարձնելով նրանց իրենց սեփական կադրերի պատրաստման համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորման գործընթացին:

դ) Կատարելագործել համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության գործուն համակարգը, իրականացնել մասնագետների, գիտատեխնիկական և կրթական ծառայությունների շուկայական պահանջարկի համատեղ կանխատեսումներ և մոնիթորինգ, ձևավորել տեխնոլոգիական տրանսֆերի մեխանիզմներ:

ե) Մասնաճյուղի զարգացման ծրագրերի մշակմանն ու իրագործման մեջ շարունակել ապահովել գործընկեր կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:

Խ Ն Դ Ի Ր 7.2 Ստեղծել նպաստավոր պայմաններ հեղափոխությունների ծավալի մեծացման, կիրառական կողմնորոշման և դասախոսական կազմի ներգրավման համար:

ա) Համարել հետազոտական աշխատանքներին մասնակցությունը և արդյունքները, ինչպես նաև մագիստրանտների և ասպիրանտների գիտական ղեկավարությունը՝ դասախոսական կազմի գնահատման կարևոր ցուցանիշ: Մշակել դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման հստակ չափանիշներ որակի գնահատման ներհամալսարանական համակարգի շրջանակներում, գնահատման արդյունքները հաշվի առնել դասախոսների առաջնային և պայմանագրերի կնքման գործընթացներում:

բ) Ընդլայնել հետազոտությունների փորձնական (նյութատեխնիկական) բազան և ապահովումը տեղեկատվական ռեսուրսներով:

գ) Ընդլայնել Մասնաճյուղի մասնակցությունը մարզի նպատակային, բազային և ըստ նախագծերի բյուջետային ֆինանսավորման համակարգերում: Բարձրացնել գիտական ներուժի օգտագործման արդյունավետությունը Մասնաճյուղի հետազոտական գործընթացներում: Մեծացնել նախագծերի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալը և հաշվեկշիռը Մասնաճյուղի գիտական բյուջեում, մասնավորապես գործընկեր ձեռնարկությունների ներդրումները արդյունաբերական ուղղվածությամբ հետազոտական նախագծերում:

դ) Ապահովել գործող գիտահետազոտական լաբորատորիաների նյութատեխնիկական և կադրային բազայի զարգացումը և նպաստել դրանց կիրառական-նորաստեղծային կողմնորոշմանը:

ե) Նպատակաուղղել Մասնաճյուղի արտադրական կապերի և ուսանողական կարիերայի աջակցման կենտրոնի գործունեությունը գործընկեր ձեռնարկությունների հետ արդյունաբերական հետազոտությունների ծավալն ու հաշվեկշիռը մեծացնելու համար:

զ) Գործընկեր ձեռնարկությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ ձեռնարկել գործուն քայլեր Մասնաճյուղի երկու չհիմնանորոգված մասնաշենքերի բազայի հիման վրա տեխնոպարկի ստեղծման ուղղությամբ:

Խ Ն Դ Ի Ր 7.3 Խթանել մասնաճյուղի գիտական հեղափոխությունների կիրառական արդյունավետության բարձրացումը, ընդլայնել միջազգային գիտական համագործակցությունը:

ա) Մասնաճյուղի գիտատեխնիկական ռեսուրսների հիման վրա ստեղծել տնտեսության տարբեր ոլորտներից ստացվող պատվերների իրականացմանը կոչված հետազոտական խմբեր:

բ) Մշակել Մասնաճյուղի մտավոր սեփականության ձևավորման և օգտագործման ներքին համակարգ:

գ) Կիրառել ուսումնառության և դասավանդման արդյունավետ մեթոդներ, ինչպիսիք են կարճաժամկետ ինտենսիվ դասախոսությունները (այդ թվում՝ հրավիրված մասնագետների կողմից), սեմինարներն ու քննարկումները, աշխատաժողովները կամ ամառային դպրոցները՝ նախապատվությունը տալով դասավանդման փոխներգործուն մեթոդներին:

դ) Աջակցել Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի, մագիստրանտների և ասպիրանտների ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում, ապահովել անհրաժեշտ տեղեկատվական և

խորհրդատվական աջակցություն նախագծերի ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնմանը և հայտերի մշակմանը:

ե) Աջակցել դասախոսների, մագիստրանտների և ասպիրանտների գիտական գործուղումներին և ստաժավորմանը արտասահմանյան առաջատար համալսարաններում ու գիտական կենտրոններում և փորձի ներդրմանը:

զ) Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:

է) Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի և ուսանողության համար ստեղծել հնարավորություններ ազատորեն օգտվելու հանրապետական և միջազգային ցանցերից և հաշվողական ռեսուրսներից (կլաստերներից):

ը) Ստեղծել ուսանողների գիտական ներուժի իրականացման պայմաններ, ապահովել առավել տաղանդավոր ուսանողներին գիտական և դասախոսական գործունեությանը նախապատրաստելու պայմաններ, ստեղծել շնորհալի ուսանողներին բարոյական ու նյութական խրախուսման համակարգ:

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Մասնաճյուղի հետազոտական նախագծերին մասնակցությունը 2016 թվին առնվազն՝
 - Գիտամանկավարժական կազմի 50%-ը
 - մագիստրանտներ և բակալավր՝ 15%
- Մասնաճյուղի հետազոտական նախագծերի ծավալը 2016 թվին առնվազն՝
 - գիտության արտաբյուջետային ֆինանսավորման ծավալի տարեկան աճ՝ 10%-ով
 - պետական բյուջեով նախատեսված հետազոտական աշխատանքների ծավալի աճ՝ 10%
- առնվազն 1 նոր հետազոտական լաբորատորիա
- Գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի)՝ առնվազն 20:

ՆՊԱՏԱԿ 8

**ԸՆԴԱՅՆԵԼ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ, ԽՐԱԽՈՒՍԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

**ԽՆԴԻՐ 8.1. Ընդլայնել և բազմազանեցնել գործընկերային կապերը Մասնաճյուղի
պատվիրատու կազմակերպությունների և տարածաշրջանային կառույցների հետ**

ա) Իրականացնել տարածաշրջանի աշխատաշուկայի առկա վիճակի ու զարգացման միտումների մոնիտորինգ՝ Լոռու մարզի զբաղվածության կենտրոնի հետ համատեղ և ձևավորել Մասնաճյուղի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազա՝ հենքի վերահաստատման և նորերի բացահայտման նպատակով:

բ) Շարունակել զարգացնել երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունները գործատու կազմակերպությունների հետ՝ ուսման հետ համատեղ աշխատանքի, ուսումնական գործընթացի լաբորատոր և

պրակտիկ բաղադրիչները այնտեղ իրագործելու և շրջանավարտների մասնագիտական կարիերային նախապատրաստելու նպատակով:

գ) Ամրապնդել գործընկեր կազմակերպությունների մասնակցությունը Մասնաճյուղի և նրա ստորաբաժանումների զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, մասնակից դարձնելով կադրերի պատրաստման համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորման հարցում:

դ) Զարգացնել համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության համակարգը, խթանել “աշխատանքի տոնավաճառների” կազմակերպմանը գործատու կազմակերպությունների հետ:

ե) Զարգացնել Մասնաճյուղի համագործակցության առկա փորձը ՀՀ առաջատար բուհերի և կազմակերպությունների հետ՝ երկկողմ (բազմակողմ) պայմանագրերի, արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող համատեղ նախագծերի շրջանակներում:

Խ Ն Դ Ի Ր 8.2 Խթանել Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների և նվիրաբերու անհատների ու կազմակերպությունների ներդրումների ծավալի մեծացմանը:

ա) Նպաստել ՀՊՃՀ Շրջանավարտների միության և նրա արտասահմանյան մասնաճյուղերի զարգացմանը, գործունեության նպատակաուղղմանը Համալսարանի արտաքին գործակցային կապերի ձևավորմանը և արտաքին ներդրումների ու նվիրատվությունների խթանմանը:

բ) Ձևավորել Մասնաճյուղի զարգացման առաջնային կարիքներից բխող դրամաշնորհային հայտերի փաթեթ, նպաստել դրա տարածմանը և պոտենցիալ շնորհատուների հավաքագրմանը:

գ) Ձևավորել շրջանավարտների տվյալների բազա էլեկտրոնային հաղորդակցության հնարավորություններով, հատուկ ուշադրություն դարձնելով առավել հաջողակ և կարող շրջանավարտների բացահայտումը և նրանց հետ կապերի հաստատումը:

Խ Ն Դ Ի Ր 8.3 Զարգացնել և բազմազանեցնել հասարակայնության ն հետ կապերը և միջազգային համագործակցությունը, նպատակ ունենալով պահպանել և բարձրացնել Մասնաճյուղի դրական իմիջը:

ա) Զարգացնել և բազմազանեցնել հասարակության հետ Մասնաճյուղի կապերը: Ապահովել Մասնաճյուղի ակտիվ համագործակցությունը ԶԼՄ-ների հետ, օպերատիվ լրատվությունը, սեփական գովազդային նյութերի հրատարակումը:

բ) Նպատակաուղղել լրատվական-գովազդային և մարքեթինգային բոլոր միջոցառումները՝ ուղղված Մասնաճյուղի դրական իմիջի պահպանմանն ու ամրապնդմանը, նրա հասարակական վարկանիշի և տեսանելիության բարձրացմանը:

գ) Զարգացնել Մասնաճյուղի ներգրավումը միջազգային համագործակցության ծրագրերում, մեծացնել միջազգային նախագծերում մասնակցող դասախոսների, ասպիրանտների և ուսանողների թիվը:

դ) Զարգացնել Մասնաճյուղի ծառայությունների մարքեթինգի ծրագիրը, համակարգել Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը:

ե) Նպաստել ուսանողների և դասախոսների միջբուհական ակադեմիական շարժունությանը, ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, համատեղ

մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ստեղծմանը և համատեղ որակավորման աստիճանների շնորհմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ

(հինգ տարվա կտրվածքով)

- Համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության զարգացվող գործուն համակարգ, գործընկեր կազմակերպությունների տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա (սկսած 2012-13 ուս. տարվանից)
- Շրջանավարտների տվյալների բազա՝ էլեկտրոնային կապի հնարավորություններով
- Պայմանագրային հիմունքներով գործող մասնաճյուղեր գործընկեր կազմակերպություններում (2016 թվին՝ 8-10)
- Մասնաճյուղի և Լոռու մարզի Առևտրաարդյունաբերական պալատի, զբաղվածության կենտրոնի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ ամենամյա “աշխատանքի տոնավաճառներ”
- Մասնաճյուղի ծառայությունների մարքեթինգի ծրագիր
- Մասնաճյուղի PR ակտիվության աճ՝ առնվազն 1.5 անգամ (2012թ. նկատմամբ)
- Արտասահմանյան, այդ թվում՝ ԱՊՀ երկրների առաջատար բուհերի հետ իրականացվող ուսանողական, մագիստրոսական և ասպիրանտական 1-2 համատեղ ծրագրեր
- Մասնաճյուղի սեփական գովազդային միջոցառումների թվի աճը առնվազն՝ 1.5 անգամ
- Մասնաճյուղի վերաբերյալ ՋԼՄ անդրադարձերի թվի աճը առնվազն՝ 1.5 անգամ: